Կազմված է «07» 08 2025 թ.
Բաղկացած է 10 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Գոլոս»
սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի
2025 թ. Օգոստոսի 7-ի թիվ 1 որոշմամբ

Տնօրեն՝
[redacted] Ֆլորա Նախշքարյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

« 7 » օգոստոսի 2025թ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 18.12.2000 թ.
գրանցման համար՝ 286.110.04072
ՀՎՀՀ՝ 02518065
18.12.2000 թ. գրանցված կանոնադրության
թիվ 1 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
____ ____ 20___ թ.

աշխատակից՝
_____ _____

«ԳՈԼՈՍ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)

2025 թ.

1. *Ընդհանուր դրույթներ*

1.1 «Գոլոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, (հետայսու ընկերություն), առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է՝ հիմնադրված 1 անձի կողմից, որը սեփականության իրավունքով ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

Ընկերությունը «Գոլոս Արմենիի» թերթի իրավահաջորդն է:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ

1.2 Ընկերության միակ մասնակիցն է

Սամվել [redacted]
Գուրգենի
Կարախանյանը

1.3 Ընկերությունն, իր գործունեությունն իրականացնում է՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ կառավարության 162 որոշմամբ հաստատված կանոնադրության, սույն կանոնադրության այլ օրենսդրական և նորմատիվ ակտերի և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխան:

1.4 Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

Ընկերության իրավունքների սահմանափակման մասին ցանկացած որոշում կարող է բողոքարկվել դատական կարգով:

1.5 Ընկերությունը պատասխանատու չէ մասնակիցների պարտավորությունների համար:

Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը կրում են իրենց ներդրած ավանսների արժեքների սահմաններում:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորություններով

Պետական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորություններով:

Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է

Հայերեն՝ «Գոլոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ռուսերեն- “Голос” общество с ограниченной ответественностью
անգլերեն՝ “Golos" company limited

ընկերության կրճատ անվանումն է
հայերեն «Գոլոս» ՍՊԸ
ռուսերեն “Голос” ООО
անգլերեն “Golos" Ltd.

1.6 Ընկերության (գտնվելու վայրը) փոստային հասցեն է՝ 37502 3 ք. Երևան, Արշակունյաց պողոտա, շ. 2, 7 հ.

2. *Ընկերության գործունեության նպատակը և առարկան*

2.1 Ընկերության գործունեության նպատակը շահույթի ստացումն է:

2.2 Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ ուղղություններով

- Հրատարակչական գործունեություն
- Պարենային և ոչ պարենային ապրանքների մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպում
- Միջնորդային գործունեություն /ոչ բորսային/:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած այլ գործունեություն:

Ընկերության կողմից այնպիսի գործունեություն իրականացնելու իրավունքը, որով զբաղվելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (լիցենզիա) ծագում է նման թույլտվությունը ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում:

3. *Ընկերության իրավունքները*

3.1 Ընկերությունը ստեղծված է համարվում և իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

3.2 Ընկերությունը, որպես իրավաբանական անձ, ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային և այլ հաշիվներ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով և կարող է հաշիվներ բացել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա բանկային, ֆինանսական, վարկային, հաստատություններում:

Ընկերությունն ունի իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ֆիրմային բլանկներ, խորհրդանիշ, ապրանքային տարբերանշան և այլ ռեկվիզիտներ:

3.3 Ընկերությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ իր շահերը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ այլ պետությունների տարածքում ներկայացնելու համար:

Նշված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են ընկերության կողմից, գործում են ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, ընկերության կողմից տրված լիազորագրերով:

3.4 Ընկերությունն օրենքով սահմանված կարգով կարող է լինել այլ ընկերության հիմնադիր (մասնակից) այդ թվում, որպես հիմնական ընկերություն դուստր տնտեսական ընկերության համար կամ գերակշռող մասնակից կախյալ տնտեսական ընկերության համար:

3.5 Ընկերությունը ոչ առևտրային (մշակութային, կրթական, մարզական և այլ) գործունեություն իրականացնելու համար կարող է ստեղծել հիմնարկ:

3.6 Ընկերությունը նաև իրավունք ունի

- Իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքել պայմանագրեր, համաձայնագրեր և այլ օրենքով չարգելված գործարքներ:
- Իրականացնել իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, իր հայեցողությամբ ՀՀ օրենքներով, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- Իրականացնել արտաքին տնտեսական գործունեություն ինքնուրույն կամ միջնորդների միջոցով, ՀՀ օրենքների պահանջների պահպանմամբ:
- Ձեռք բերել և թողարկել արժեթղթեր ՀՀ օրենսդրության սահմանված կարգով:

- Կարող է մասնակցել մրցույթների, աճուրդների , ցուցահանդեսների և այլ առևտրային և ոչ առևտրային միջոցառումների, կարող է թողարկել գովազդային, տեղեկատվական, մեթոդական ազդագրեր և օրենսդրությամբ չարգելված այլ նյութեր:

4. Ընկերության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ընկերության և մասնակիցների պատասխանատվությունը

4.1 Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն'

- Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:
- Մասնակցել ընկերության ընդհանուր ժողովներին, սահմանված կարգով առաջարկներ ներկայացնել, քվեարկելով կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակով:
- Ստանալ ընկերության գործունեության արդյունքում ստեղծված շահույթի համապատասխան մասը (դիվիդենտ):
- Սույն կանոնադրությամբ որոշված սահմաններում տեղեկություններ ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ, ծանոթանալ հաշվապահական հաշվառմանը, հաշվետվությանը և ընկերության գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերի հետ:
- Ընկերության ծառայություններից օգտվել առաջնահերթ իրավունքով:
- Դուրս գալ ընկերությունից, ստանալով իր ներդրումները, ընկերության ունեցվածքի մեջ սույն կանոնադրությամբ սահմանված հաշվարկով, կարգով և ժամկետներում:
- Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով օտարել կանոնադրական կապիտալում ունեցած իր բաժնեմասը, լրիվ կամ մասնակի:
- Այլ մասնակիցների բաժնեմասերը կամ դրանց մասը օտարելու դեպքում ստանում են այն ձեռք բերելու նախապատվություն (նախապատվության իրավունք):
- Ընկերության լուծարման դեպքում, ընկերության բոլոր պարտավորությունների կատարումից հետո մնացած (մնացորդ) գույքից ստանալ մաս, կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասին համապատասխան:
- Ընդհանուր ժողովում քվեարկության ժամանակ մասնակիցներն ունեն կանոնադրական հիմնադրամում իրենց փայերին համապատասխան ձայների քանակություն:

4.2 *Ընկերության մասնակիցները պարտավոր են*

- Կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի համամասն ներդրումներ կատարել սույն կանոնադրությամբ և մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափերով, կարգով և ժամկետներում:

  Սահմանված ժամկետում ներդրում չկատարած մասնակիցը պարտավոր է ուշացման համար վճարել տուգանք չվճարած գումարի 10 %-ի չափով:
- Չհրապարակել ընկերության գործունեությանը վերաբերող գաղտնի համարվող տեղեկությունները:
- Կատարել սույն կանոնադրության և ընդհանուր ժողովի որոշումները:

4.3 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր մասնակիցների

պարտավորություններով:

Ընկերության պարտավորությունների համար մասնակիցները պատասխանատվություն են կրում իրենց կողմից կատարված ներդրումների չափով:

4.4 Մասնակցի կողմից սույն կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում այդ մասնակիցը պարտավոր է դրա հետևանքով ընկերությանը կամ մյուս մասնակցին պատճառած վնասը փոխհատուցել ամբողջությամբ:

4.5 Մասնակցի կողմից իր պարտավորությունների պարբերաբար չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման, կամ իր գործողություններով ընկերության գործունեությանը խոչընդոտելու դեպքերում մասնակիցը կարող է վտարվել (հեռացվել) ընկերությունից, մասնակիցների միաձայն որոշմամբ: Մասնակիցը (նրա ներկայացուցիչը), որի հեռացման հարցը դրված է քվեարկության, քվեարկությանը չի մասնակցում:

5. Ընկերության կանոնադրական կապիտալը

5.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է նրա մասնակիցների ավանդի արժեքից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50 000 դրամ (հիսուն հազար), որը բաժանված է 50 բաժնեմասերի, յուրաքանչյուր բաժնեմասը 1000 դրամ:

Կանոնադրական կապիտալում ներդրումները համապատասխանում են հետևյալ բաժնեմասերին, (ըստ ավանդների) 1. Սամվել Գուրգենի Կարախանյան 100% 50 000 դրամ

5.2 Ընկերության մասնակիցները չեն կարող ազատվել կանոնադրական կապիտալում ավանդ ներդնելու պարտականությունից, ներառյալ՝ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցումը:

5.3 Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը, որը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված չափից:

5.4 Ընկերության հիմնադիրները (մասնակիցները) պարտավոր են մինչև ընկերության գրանցումը ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը:

5.5 Կանոնադրական կապիտալի փոփոխման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

5.6 *Ընկերությունը կարող է մեծացնել կանոնադրական կապիտալի չափը մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման հիման վրա և ի հաշիվ*

- մասնակիցների կողմից կատարվող լրացուցիչ ներդրումների
- ընկերության գործունեության արդյունքում ստացված շահույթի

Կանոնադրական կապիտալի չափի մեծացումը կարող է կատարվել միայն կանոնադրական կապիտալի լրիվ ձևավորումից հետո:

5.7 *Կանոնադրական կապիտալի չափը կարող է փոքրացվել, եթե՝*

- Երկրորդ և հաջորդող ֆինանսական տարիների ավարտին ընկերության զուտ ակտիվների արժեքը կանոնադրական կապիտալից փոքր է, բայց ոչ պակաս քան կանոնադրական կապիտալի չափը /50 000 դրամ/:
- Ընկերությունից որևէ մասնակցի դուրս գալու, կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով որևէ մասնակցի հեռացնելու մասին որոշում ընդունելու դեպքում:

Կանոնադրական կապիտալը կարող է փոքրացվել նաև այլ հիմքերով:

5.8 Կանոնադրական կապիտալի փոքրացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

5.9 Կանոնադրական կապիտալի փոքրացման մասին որոշումն ընդունելուց հետո ընկերությունը պարտավոր է 30 օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցել իր պարտատերերին:

5.10 *Կանոնադրական կապիտալի փոփոխման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության գրանցման պահից:*

6. Ընկերության օգուտների և վնասների բաշխումը և հիմնադրամների ձևավորումը

6.1 Ընկերության գործունեության արդյունքում ստացված շահույթը, բոլոր հարկերի և այլ պարտադիր վճարումների մուծումից, ընկերության այլ պարտավորությունների մարումից հետո մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանվող կարգով ու չափերով կարող են ուղղվել

- Ընկերության կանոնադրական կապիտալի մեծացմանը կամ ընկերության գործունեության ընդլայնմանը առանց կանոնադրական կապիտալի չափի մեծացման:
- Ընկերության պահուստային, կուտակման (զարգացման), սպառման և այլ հիմնադրամների ձևավորմանը:
- Մասնակիցներին նրանց բաժնեմասերին համամասն, որպես դիվիդենտ:

6.2 Կանոնադրական կապիտալի չափի մեծացումը կամ ընկերության գործունեության ընդլայնմանը ուղղված հատկացումը,(առանց կանոնադրական կապիտալի փոփոխման), ինչպես նաև ընկերության հիմնադրամների հատկացումները կատարվում են մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան, կիսամյակային և եռամսյակային արդյունքներով, իսկ մասնակիցների միջև դիվիդենտի բաշխումը կատարվում է ֆինանսական տարվա ավարտին, ֆինանսական տարվա արդյունքներով:

6.3 Ընկերության պահուստային հիմնադրամը ձևավորվում է մաքուր շահույթի առնվազն 5 %-ի չափով, տարեկան հատկացումների արդյունքում, մինչև պահուստային հիմնադրամի չափը կկազմի կանոնադրական կապիտալի 25%-ը:

Պահուստային հիմնադրամը ուղղվում է ընկերության կրած կորուստների և գործունեության արդյունքում առաջացած վնասների վերականգնմանը:

Պահուստային հիմնադրամի բավարար չլինելու դեպքում ընկերության գործունեության արդյունքում առաջացած վնասների չփոխհատուցված մասը բաշխվում է մասնակիցների միջև կանոնադրական կապիտալում նրանց ունեցած բաժնեմասերի համամասնությամբ:

6.4 Ընկերության գործունեության տարեկան արդյունքներով, մասնակիցների միջև բաշխման ենթակա շահույթը կամ դրա մասը մասնակիցների ժողովի որոշմամբ կարող է թողնվել ընկերության տրամադրության տակ, որպես նրանց կողմից կատարված լրացուցիչ ներդրում կամ ուղղել արտադրության ընդլայնմանը և զարգացմանը ժամանակավոր օգտագործման ձևով:

6.5 Կուտակման, սպառման և այլ հիմնադրամներին հատկացումների չափը և կարգը սահմանվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ:

7. *Ընկերության կառավարումը*

7.1 Ընկերության կառավարման կարգը, կառավարման մարմինների իրավասությունը սահմանվում են օրենքով և սույն կանոնադրությամբ:

7.2 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է:

7.3 Մասնակիցները ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ և կամ իրենց կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչների միջոցով:

7.4 Ընդհանուր ժողովում մասնակիցներն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համապատասխան ձայնի իրավունք:

7.5 Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են ընդհանուր ձայների 60 % ունեցող մասնակիցները (նրանց ներկայացուցիչները):

7.6 Մասնակիցների ժողովը գումարվում է ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

7.7 Մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում

- Ընկերության կանոնադրությունը և կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը:
- Ընկերության գործադիր մարմինների կազմավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
- Ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռների հաստատումը, շահույթի ու վնասների բաշխումը:
- Ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը:
- Ընկերության վերստուգողի ընտրությունը:
- Աուդիտ կատարող անձի հաստատումը:
- Կանոնադրական կապիտալի 1/4-ի չափը գերազանցող պայմանագրերի կնքումը:
- Ընկերության կառուցվածքի, ներքին կանոնակարգի, հաստիքների հաստատումը:
- Ժողովի նախագահի ընտրությունը:
- Մասնակիցների կողմից ներդրումներ կատարելու, ներդրումների չափի, կարգի և ժամկետների վերաբերյալ որոշումների ընդունումը:
- Մասնակիցների ընդհանուր ժողովը կարող է քննարկել և որոշում կայացնել ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած այլ հարցերով:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմիններին:

7.8 Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից որոշումներն ընդունվում են՝

- Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման մասին՝ միաձայն
- Ընկերության կանոնադրությունը և կանոնադրական կապիտալի չափի փոփոխման (փոքրացման) մասին՝ ձայների որակյալ մեծամասնությամբ (3/4):

Մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող այլ հարցերի վերաբերյալ՝ մասնակիցների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ:

7.9 Մասնակիցների ընդհանուր ժողովը ընտրում է մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահ:

ժողովի նախագահը

- Նախագահում է մասնակիցների ընդհանուր ժողովում:
- Նախապատրաստում է ընդհանուր ժողովը և ղեկավարում է այն:
- Կարող է իր նախաձեռնությամբ հրավիրել արտահերթ ժողով:
- Կազմակերպում է արձանագրության փարումը:
- Իրականացնում է ընդհանուր ժողովի կողմից իրեն տրված այլ իրավասություններ:

7.11 *Մասնակիցների ընդհանուր ժողովը նշանակում է տնօրեն, որը ընկերության գործադիր մարմինն է հանդիսանում:*

7.12 Գործադիր մարմինը տնօրենը, իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարությունը:

Տնօրենը լուծում է ընթացիկ բոլոր հարցերը, բացառությամբ մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերից:

7.13 Մասնակիցների ժողովը կարող է իր պարտականությունների մի մասը (ոչ բացառիկ իրավասությանը վերաբերող) փոխանցել տնօրենին:

7.14 Տնօրենը կազմակերպում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է նրան և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ ընդունել:

7.15 Տնօրենն իրավունք ունի

- Առանց լիազորության գործել ընկերության անունից:
- Ներկայացնել ընկերության շահերը իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում:
- Աշխատանքի ընդունել և ազատել աշխատանքից ընկերության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
- Կնքել պայմանագրեր, տալ լիազորագրեր:
- Ֆինանսավարկային հաստատություններում բացել հաշվարկային և այլ հաշիվներ, ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:
- Իր իրավասության սահմաններում տալ հրամաններ, հրահանգներ, ցուցումներ և հսկել դրանց կատարումը:

7.16 Ընկերության տնօրենը նշանակվում է ընկերության ընդհանուր ժողովի կողմից, նշանակումը ձևակերպվում է հրամանով կամ պայմանագրով:

7.17 *Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող վերստուգողը:*

7.18 Վերստուգողն ընտրվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից և հաշվետու է միայն մասնակիցների ընդհանուր ժողովին:

Տնօրենը չի կարող լինել վերստուգող:

7.19 *Վերստուգողն իրավունք ունի և պարտավոր է*

- Մասնակիցների ժողովի, աշխատանքային կոլեկտիվի պահանջով կամ իր նախաձեռնությամբ ոչ պակաս, քան տարին մեկ անգամ կատարել վերաստուգում, որի արդյունքներն ուղարկվում են ընկերության մասնակիցների ժողովին:
- Ընկերության պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու բոլոր անհրաժեշտ

նյութերը, փաստաթղթերը և բացատրությունները:

- Արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու պահանջ ներկայացնել, եթե գտնում է, որ ընկերության շահերին էական սպառնալիք է առաջացել է:
- Ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռի և հաշվետվության վերաբերյալ տալիս է եզրակացություն, առանց որի ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման մասնակիցների ժողովի կողմից:
- Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ընդհանուր ժողովին և տնօրինության նիստերին:

7.20 Վերստուգողի գործունեության կարգը և այլ իրավասությունները սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից ընդունված և հաստատված կանոնակարգով:

8. Կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը

8.1 Ընկերության մասնակիցը իրավունք ունի կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը կամ դրա մասը օտարել ընկերությանը, կամ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցներին:

8.2 Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասն մասնակցի բաժնեմասը կամ դրա մասը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն:

8.3 Մասնակիցը պարտավոր է իր բաժնեմասը օտարելու մտադրության մասին տեղյակ պահել ընկերությանը, մեկ ամիս առաջ, և եթե մեկ ամսվա ընթացքում ընկերությունը և մյուս մասնակիցները չեն օգտվում իրենց նախապատվության իրավունքից մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձանց, իսկ եթե բաժնեմասի օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, և մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ընկերությունը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը:

8.4 Մասնակցի բաժնեմասը ընկերության կողմից ձեռք բերելու դեպքում ընկերությունը պարտավոր է այն իրացնել այլ մասնակիցների կամ երրորդ
անձանց, երեք ամսվա ընթացքում կամ նվազեցնել (փոքրացնել) իր կանոնադրական կապիտալը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.5 Կանոնադրական կապիտալի բաժնեմասը կարող է անցնել ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.6 Ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա նրա անձնական պարտքերի դիմաց բռնագանձում տարածվել կարող է միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար նրան պատկանող այլ գույքի անբավարար լինելու դեպքում:

Եթե մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում է տարածվել, ապա դադարում է նրա մասնակցությունն ընկերությանը:

8.7 Ընկերությունից դուրս եկած մասնակցիս վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասին համապատասխանող գույքի արժեքը:

Վճարումը կատարվում է դուրս գալու պահին հաշվետվության հաստատումից հետո:

Մասնակցի և ընկերության համաձայնությամբ բաժնեմասի արժեքը կարող է հատուցվել բնեղենով:

Գույքի արժեքը որոշվում է մասնակցի դուրս գալու պահին կազմված հաշվեկշռով:

8.8 Եթե կանոնադրական կապիտալում, որպես ավանդ ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա այդ գույքը վերադարձվում է դուրս եկող մասնակցին:

Գույքի բնականոն մաշվածության հետևանքով նվազած արժեքը չի հատուցվում:

9. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

9.1 Ընկերությունը օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է վերակազմակերպվել այլ ընկերության՝ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման, վերակազմավորման միջոցով կամ լուծարվել:

9.2 Ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է նրա հիմնադիրների ընդհանուր ժողովի միաձայն որոշման հիման վրա կամ օրենքով նախատեսված դեպքերում դատական կարգով, դատարանի վճռով:

9.3 Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումն ընդունելուց հետո ընկերությունը պարտավոր է անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական մարմնին և սահմանված ժամկետներում ու կարգով ծանուցել այդ մասին իր բոլոր պարտատերերին, որոնք իրավունք են ստանում պահանջել ընկերությունից պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում:

9.4 Մասնակիցների ժողովի որոշմամբ ընկերության լուծարման դեպքում, լուծարման գործընթացը իրականացնում է ժողովի կողմից նշանակված լուծարման հանձնաժողովը, սահմանելով լուծարման կարգն ու ժամկետները քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Դատական կարգով ընկերության լուծարման դեպքում, լուծարման գործընթացը իրականցվում է օրենքով սահմանված կարգով ստեղծված լուծարման հանձնաժողովը:

Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում ընկերության գործերի կառավարման լիազորությունները:

Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

9.5 Լուծարման հանձնաժողովը իրականացնում է ընկերության գույքի վերագնահատում, միջոցներ ձեռնարկում ընկերության պարտատերերի հետ վերջնահաշվարկներ կատարելու և ընկերության դեբիտորական պարտքերը վերադարձնելու ուղղությամբ, կազմում է լուծարային հաշվեկշիռը, որը հաստատում է իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի մարմինը:

Հաստատված լուծարման հաշվեկշիռը լուծարման հանձնաժողովը ներկայացնում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին:

9.6 Ընկերության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված հերթականությամբ:

9.7 Ընկերության լուծարումը դա ընկերության, որպես իրավաբանական անձի դադարումն է առանց իրավահաջորդության:

9.8 Ընկերությունը համարվում է լուծարված և նրա գոյությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից: